մահմեդական քուրդ ցեղապետներ, առթի կսպասեն մի կերպով վերջ տալ նորա իշխանութեան և Եզիդը ջնջել կամ մահմեդական դարձնել։

—Արդէն տեղ տեղ սկսած էին Եզդի կանայք և աղջկունք փախցնել, որով ատելութեան հուրը տակաւ առ տակաւ սաստկացաւ նաև Եզդի ժողովրդեան մէջ ևս։ Քրդեր տեսան որ բռնի չեն կարող ընկճել և կամ վրէժ լուծել, խորամանկութեան դիմեցին։ Եզդիներու օրէնքը չէր ներեր որ իւրեանք ևս վրէժ լուծելու համար քրդերու փախուցած Եզդի աղջկայ փոխարէն Քուրդ աղջիկ փախցնեն, այլ ստիպուած էին քրդերէ 10—20 մարդ սպաններով վրէժ լուծել։

—Հայդարձի ճանկզեռի[1] (Ոսկեբաղուկ) Ալի ալան առ երեսս Միր-չոպանի հետ բարեկամութիւն կը հաստատէ, շատ անդամ թախանձանքով Միր-չոպանին կը հրաւիրէ պատուելու, նա ևս պարզամտութեամբ իւր կնոջը հետ կը գնայ։ Ալին Եզդի շէյխի մի կաշառելով՝ Միր-չոպանին համարիչը զողանալ տուած և յղած էր նորա աղջկան, որ նա ևս հրաւէրին ներկայ գտնուի, աղջիկն իսկզբան չհամոզուիր, յետոյ հօրը յղած նշանը տեսնելով և շէյխի ստիպման և երդման հաւատալով կը գնայ։ Ալին պատրաստութիւն տեսած էր, աղջիկը երբ դէպի Ալիի տունը գալու վերայ էր, Ալիի դարան մտած մարդիկը յափշտակեցին, դրին ձիու վերայ, փախուցին։

Միր-չոպան Ալիի տան մէջ նորա բացակայութիւնից

---

1. Յետոյ պատերազմի մէջ Ալիի բազուկը կտրուեցաւ, քրդեր նորա արած քաջութեան համար փոխանակ Զոլախ (ձեռնատ) անուանելու, ի պատիւ նորա Ոսկեբազուկ անուանեցին, որ մինչև ցայս օր այդ մականունը Ալիի տան վերայ կայ։